

Հ Ա Ն Գ Ի Ս Տ

ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԴԵՐԵՆԻԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՓՈԼԱՏՅԱՆԻ
(1914—1963)

1963 թվականի նոյեմբերի 22-ին Բեյրութում եղերական մահով վախճանվեց գերաշնորհ Տ. Դերենիկ եպիսկոպոս Փոլատյանը:

Հանգուցյալը, աշխարհական անունով Հայկ, ծնվել է 1914 թվականի հունվարին, Քեսարում: Նախնական կրթությունն ստացել է ծննդավայրի ծխական դպրոցում, իսկ Հալեպի ամերիկյան կոլեջում՝ իր միջնակարգ կրթությունը, 1924—1932 թվականներին:

Մի տարի իր ծննդավայրում ուսուցչությունը զբաղվելուց հետո, 1933 թվականին ընդունվել է Անթիլիասի դպրեվանդը և 1935 թվականին փալլոն հաջողությամբ ավարտելով դպրեվանքի եկեղեցագիտական և հայագիտական դասընթացը, հունիսին կուսակրոն քահանա է ձեռնադրվել, վերանվանվելով Տ. Դերենիկ արքեպ, ձեռամբ վերատեսուչ գերաշնորհ Տ. Շահն եպիսկոպոս Գասպարյանի:

Այնուհետև խոստովանալից և պատրաստված, երիտասարդ հոգևորականի առաջ քացվում է հովվական, վարչական, կրթական գործունեության լայն ասպայեզ:

1936 թվականին, երջանկահիշատակ Տ. Բարգեն աթոռակից կաթողիկոսից ստացել է մասնավոր վարդապետական դավազանի իշխանություն: Վարդապետական իր ավարտաճառի նյութն էր «Յոթը կաթողիկե թուլթերու մեկնությունը»:

1938 թվականին, իր ուսումը շարունակելու համար մեկնել է Ամերիկայի Միացյալ Նահանգները: 1941 թվականին ստացել է աստվածաբանության մագիստրոսի աստիճան, 1942 թվականին վկայվել է կոլումբիա համալսարանից մանկավարժության մագիստրոսի աստիճանով:

Ամերիկայի Միացյալ Նահանգներում ուսանողության տարիներին ակտիվ մասնակցություն է բերել թեմի ազգային-եկեղեցական կյանքին՝ ծավալելով քաղաքական, հրապարակագրական բեղուն գործունեություն:



1945 թվականին ուսումը ավարտած, Կիլիկյան Աթոռի նորընտիր կաթողիկոս լուսահոգի Տ. Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյանցի որպես քարտուղար և դավազանակիր, վերադարձել է Աթոռ՝ նվիրվելու ուսուցչական, վանական և վարչական գործունեության:

1946 թվականին նշանակվել է Անթիլիասի դպրեմանքի վերատեսուչ, ուր ծավալել է արդյունաշատ գործունեություն մինչև 1956 թվականը:

1947 թվականի փետրվարին, երջանկահիշատակ Ս. Գարեգին կաթողիկոսից ստացել է ծայրագույն վարդապետական իշխանություն և նույն ամսվա 16-ին եպիսկոպոս է ձեռնադրվել Ս. Փառեն, Ս. Զարեհ, Ս. Խորեն և Ս. Ղևոնդ ծայրագույն վարդապետների հետ, Անթիլիասում:

Ամեն տեղ, ուր կոչման ձայնը և ծառայության ոգին նրան առաջնորդել են, հանգուցյալը եղել է անսպառ եռանդի, անխնայ աշխատասիրության մարդը: Վանական և կրթական ծանր, հոգեհեցուցիչ աշխատանքների մեջ, ողբացյալ սրբազանը զարմանալի ջանասիրությամբ ժամանակ է գտել զբաղվելու նաև գրական, մատենագրական աշխատանքներով: Նրա բեղուն գրչին են պատկանում բազմաթիվ հրատարակված արժեքավոր ուսումնասիրություններ, հայերեն և անգլերեն լեզուներով, որոնցից կարելի է հիշել Բարգեն կաթողիկոսի «Հայոց Եկեղեցի» գրքուկի անգլերեն թարգմանությունն ու հրատարակությունը, «Հայոց Եկեղեցվո հավատո խոստովանությունը ըստ Ներսես Շնորհավոյ», «Քաղկեդոնական բանավեճերը հայկական աղբյուրներով» Գիրք թղթոցի համաձայն, «Հայաստանյայց Եկեղեցվո դաստիարակչական դերը», «Ծաղկաբաղ աղօթից ի

ժամագրաց և ի պատարագամատոյց մատենէ», «Հոգիներուն համար», «Թուղթ հերքման», «Հերկիր հայրենի» և այլ արժեքավոր պատմական, աստվածաբանական, բանասիրական երկասիրություններ:

Վերջին տարիներին հանգուցյալ սրբազանը ձեռնհասորեն վարել է Արդիս-Արեբայում եթովպական աստվածաբանական վարժարանի վերատեսչությունը:

Դերենիկ սրբազանը համակ աշխատանք էր, շարժում, կյանք և գործ:

Նա իր աչքերը փակում է իր ուժերի ծաղկման, գործունեության և հասունության շրջանում:

Նրա ողբերգական մահը կիրուստ է Հայաստանյայց Եկեղեցու համար:

Նրա ավելի քան 25 տարիների եկեղեցական, կրթական և գրական բեղուն գործունեությունը գեղեցիկ և անթառամ լուսապսակ են կազմել նրա անվան և կյանքի շուրջ:

«Նրանի մեռելոցն որք ի Տէր ննջեցին..., քանզի հանգեան յաշխատութենէ իւրեանց, բայց միայն գործք իւրեանց չոգան զհետ նոցա» (Յայտնթ. ԺԴ 13):

Մեռավ գործի մարդը, բայց մնաց գործը: Դերենիկ սրբազանի հիշատակը անթառամ կմնա իր բազմաթիվ աշակերտների, բարեկամների և երախտագետ հայ ժողովրդի սրտում:

Կո՛ւնկ և աղո՛թք նրա անթառամ հիշատակին:

